Պարույր Սևակ

Ութնյակներ

Մաս 4

31

Բավական է
Ասես «ջանիկ»՝
Իրեն կզգա
Նա երջանիկ...
Վա՛յ քո խելքին,
Վա՛յ քո երգին,
Վանդակ ընկած
Դու դեղձանիկ...

32

Նա սուտ է փչում: Թե սուտը բռնես-
«Որսորդ եմ» կասի:
Անհամի մեկն է: Ասես՝ անհամ ես-
«Նոր սորտ եմ» կասի:
Մարդ է սպանել: Ու եթե բռնես
Հանցանքի տեղում՝
Էլի՛ կգտնի արդարացումը.
«Հերոսոտ եմ» կասի:

33

Հետըդ «ուռռա» բերեցիր
Եվ ի՛նչ - միայն «վայ» տարար,-
Ուռցըրածըդ՝ համարիչ,
Ջուր ցրածըդ՝ հայտարար:
Ինքըդ հաշվիր, թվաբա՛ն,
Թե ի՛նչ մնաց քանորդում.
Մի մանրացո՛ղ կոտորակ...
Տե՛ղն է անբան շանորդուն:

34

Թե նա մի քիչ վատ է զգում՝
Թեթևակի հիվանդանում,
Վայնասուն է զցում իսկույն,
Ո՛նց է սուգ ու շիվան դնում:
Իսկ դու - կեցցե՛ս. Հրո երկիր,
Թե Սառուցյալ օվկիան ընկիր՝
Միևնույնն է, զգում ես քեզ
Բարեհուսո հրվանդանում:

35

Գրաբար բառ է. այդ ի՞նչ ասել է
«Դաստիարակել»,-
Եվ հասկանում է նա էլ յուրովի՝
«Ղաստի վարակել»:
Անծանոթ բառ է նաև «կրթելը»,
Բայց նա կրթում է,
Եվ ստացվում է նո՛ւյն բանը կրկին.
Շա՛տ լավ կրտում է:

36

Շնախոտ լինի,
Թե գինձ ու կոտեմ՝
Ինչ էլ տալիս են,
Ասում է՝ կուտեմ:
Մարսողությունը
Ասենք թե սուր է,
Բայց, խելքի՞դ մեռնեմ,
Բա խե՛լքը ուր է:

37

Աչք մտնողը աչքի ընկավ՝
Աչք կհանի...
Աչքալույս տաս՝ աչքի լույսն ես -
Աչքով կանի.
Աչքիդ չընկավ՝ աչքի փուշն ես -
Այնուհետև՝
Քեզ նայելու աչք էլ չունի
Չորսաչքանին:

38

Գործի գլուխ ես՝
Գլուխդ է տանում,
Գլխիցդ էլ դուրս տաս՝
Գլխով է անում:
Գործից հանեցի՞ն -
Էլ գլո՞ւխ կտա...
Իր գործից լավ է
Նա գլուխ հանում:

39

Ինքն էլ գիտի, որ գործից
Բնավ գլուխ չի հանում,
Բայց արի տես, որ հիմա
Գործի գլուխ է դարձել:
Իր այդ բարձր պաշտոնով
Ոմանց խելքից է հանում,
Սակայն շատ ու շատերին
Նաև խելքի է գցել:

40

Գլխի է ընկել.
Գլուխ է պահում՝
Այստեղ ու այնտեղ
Գլուխ տանելով:
Գլխի է ընկել.
Գլուխ է յուղում՝
Գլխավորներին
Գլխով անելով: